

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀՆԱԳԵՏՆԵՐԻ 2-ՐԴ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՄԱՌԱՅԻՆ ԴՊՐՈՑ

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայազիտական հետազոտությունների կենտրոնի գիտաշխատող,

պ.գ.թ. Բ. Վարդանյան

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայազիտական հետազոտությունների կենտրոնի նախաձեռնությամբ և Հայազիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի ֆինանսավորմամբ, հուլիսի 1-7-ը իր աշխատանքները սկսեց **«Երիտասարդ հնագետների 2-րդ միջազգային ամառային դպրոցը»**, որի նպատակն է ՀՀ տարբեր բուհերի և Ջավախքից հայազիտական ուղղվածությամբ ուսանողներին սովորեցնել հնագիտական պեղումների մեթոդաբանություն, ստեղծել պեղումներին մասնակցելու հնարավորություն և ծանոթանալ հնամարդաբանական, հնակենդանաբանական, նյութերի կամերալ մշակման, հնագույն տեխնոլոգիաների վերականգման մեթոդներին:

Հնագիտական դաշտային գործնական աշխատանքներն իրականացվում են Շիրակի մարզի Ջրաձորի հնավայրում: Ամառային դպրոցի աշխատանքներին մասնակցում են ՀՀ Վանաձորի պետական համալսարանի, Շիրակի պետական համալսարանի և Վրաստանի Սամցխե-Ջավախեթիի համալսարանի պատմության բաժինների ուսանողները:

Առաջին և երկրորդ օրերին ուսանողները մասնակցեցին հնավայրի պեղումներին և լսեցին հնամարդաբան Հ. Սիմոնյանի դասախոսությունը հնամարդաբանական հետազոտությունների մեթոդաբանության վերաբերյալ:

Երրորդ և չորրորդ օրերին դպրոցին մասնակից ուսանողները շարունակեցին Ջրաձորի ամրոցում բացված տուֆաշեն մոնումենտալ շինության պեղումները:

Ամառային դպրոցի ընթացքում ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի փորձարարական հնագիտության լաբորատորիայի գիտաշխատող Իվան Սեմյանը ներկայացրեց օբսիդիանի մշակման քարեդարյան տեխնոլոգիաները, որից հետո ուսանողները փորձարկեցին ռետուշավորման, ցլեպման և այլ գործողությունները: Մասնակից ուսանողները պատրաստեցին նաև օբսիդիանից գործիքներ ևս:

Դաշտային աշխատանքների ընթացքում ստացած գիտելիքները ամրապնդվեց Գյումրու պատմական միջուկի և Կումայրի պատմամշակութային արգելոց-թանգարան ճանաչողական այցերով, որոնց ընթացքում ներկայացվեց ինչպես քաղաքի պատմության առանձին դրվագներ, այնպես էլ թանգարաններում հնագիտական առարկաների ֆոնդավորման, պահպանության, ցուցադրության բազմաթիվ հարցեր:

Հինգերորդ օրը դպրոցին մասնակից ուսանողները շարունակեցին Ջրաձորի ամրոցում բացված տուֆաշեն մոնումենտալ կառույցի արևելյան հատվածի պեղումները:

Ամառային դպրոցի ընթացքում ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի փորձարարական հնագիտության լաբորատորիայի գիտաշխատող Իվան Մեմյանը ներկայացրեց բրոնզեդարյան վերակազմված սպառազինության որոշ նմուշներ՝ պարսատիկ, նիզակ և սակր: Ուսանող մասնակիցները հետազոտեցին բրոնզեդարյան սպառազինության օգտագործման տեխնիկան և կատարեցին պարսատիկով փորձնական քարանետումներ:

Ուսանողները լսեցին նաև պ.գ.թ. Բ. Վարդանյանի դասախոսությունը Հայաստանի բրոնզի դարի վերաբերյալ, իսկ Ի. Մեմյանը ներկայացրեց և փորձարկեց Մերձավոր Արևելքում տարածված երկփող երաժշտական գործիք՝ ավլուս:

Վեցերորդ և յոթերորդ օրերին դպրոցին մասնակից ուսանողները շարունակեցին Ջրածորի ամրոցում բացված տուֆաշեն մոնումենտալ կառույցի պեղումները:

Ամառային դպրոցի ընթացքում ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի փորձարարական հնագիտության լաբորատորիայի գիտաշխատող Իվան Մեմյանը ներկայացրեց բրոնզի ձուլման տեխնոլոգիան և ուսանողների մասնակցությամբ պատրաստվեց Լճաշենի դամբանադաշտից գտնված ուշբրոնզեդարյան նետասլաք:

Ամառային դպրոցի ավարտին Վանաձորի պետական համալսարանի և Վրաստանի Սամցխե-Ջավախեթի համալսարանի ուսանողները ստացան մասնակցության վկայականներ:

Ամառային դպրոցի մասնակից ուսանողները ներկայացրեցին նաև պեղումների հաշվետվություն, որը վերջիններիս մասնագիտական ընտրությանը նպաստող գործոններից էր:

ВТОРАЯ МЕЖДУНАРОДНАЯ ЛЕТНЯЯ ШКОЛА МОЛОДЫХ АРХЕОЛОГОВ

Ширакском центре арменоведческих исследований НАН РА,

к.и.н. Б. Варданян

С 1 по 7 июля в Ширакском центре арменоведческих исследований НАН РА, при поддержке Всеармянского фонда финансирования арменологических исследований, состоялась Вторая международная летняя школа молодых археологов. Это мероприятие предоставило участникам уникальную возможность не только прикоснуться к древним артефактам, но и освоить современные методы антропологической, палеозоологической и камеральной обработки материалов, а также познакомиться с технологиями реставрации древних технологий.

Практическая часть программы проходила на древнем городище Джрадзор в Ширакском марзе, где студенты исторических факультетов Ванадзорского и Ширакского государственных университетов, а также Самцхе-Джавахетского университета Грузии погрузились в атмосферу настоящих археологических исследований.

Первые два дня школы были посвящены раскопкам городища и прослушиванию лекции антрополога А. Симоняна, который подробно рассказал о тонкостях антропологического исследования. В последующие дни участники продолжили работы на раскопках монументального сооружения, расположенного на территории крепости Джрадзор.

Особое внимание было уделено практическим занятиям. Иван Семьян, научный сотрудник лаборатории экспериментальной археологии Института археологии и этнографии НАН РА, продемонстрировал студентам технологии обработки обсидиана каменного века. Участники не только наблюдали за процессом, но и сами попробовали свои силы в ретуши, лущении и создании обсидиановых инструментов.

Знания, приобретённые в ходе раскопок, были закреплены во время экскурсий в историческое ядро Гюмри и Кумайрский историко-культурный музей-заповедник. В ходе визитов студенты смогли ознакомиться с уникальными экспонатами и узнать об особенностях сохранения и экспонирования археологических находок в музеях.

Пятый день школы также прошёл в активной работе на раскопках восточной части монументального сооружения в крепости Джрадзор. Затем Иван Семьян представил участникам реконструкции оружия бронзового века, включая пращу, копье и секиру. Студенты получили возможность не только исследовать эти артефакты, но и попробовать себя в стрельбе из пращи.

Помимо этого, студенты посетили лекцию кандидата исторических наук Б. Варданяна о бронзовом веке Армении. После лекции Иван Семьян провел мастер-класс по использованию авлоса — двухдухового музыкального инструмента, широко распространённого на Ближнем Востоке.

В заключительные дни летней школы учащиеся продолжили работу на раскопках, а также приняли участие в демонстрации технологии бронзового литья. Под руководством Ивана Семьяна студенты изготовили стрелу эпохи поздней бронзы, аналогичную той, что была найдена в могильнике Лчашен.

По итогам летней школы студенты Ванадзорского государственного университета и Самцхе-Джавакхетского университета Грузии получили сертификаты об участии. Итогом их работы стали отчёты о проведённых раскопках, которые, как надеются организаторы, окажут влияние на дальнейший профессиональный выбор молодых археологов.

The Second International Summer School for Young Archaeologists

Shirak Center for Armenological Studies NAS RA,

Dr. B. Vardanyan

From July 1st to 7th, the Second International Summer School for Young Archaeologists took place at the Shirak Center for Armenological Studies of the NAS RA, with the support of the All-Armenian Fund for Armenological Studies. This event offered participants a unique opportunity not only to engage with ancient artifacts but also to master modern methods of anthropological, paleozoological, and laboratory processing of materials, as well as to learn about the restoration of ancient technologies.

The practical part of the program took place at the ancient settlement of Jradzor in the Shirak region, where students from the history faculties of Vanadzor State University, Shirak State University, and Samtskhe-Javakheti University of Georgia immersed themselves in the atmosphere of real archaeological research.

The first two days of the school were dedicated to excavating the settlement and attending a lecture by anthropologist A. Simonyan, who provided detailed insights into the nuances of anthropological research. In the following days, participants continued their work on the excavation of a monumental structure located within the fortress of Jradzor.

Special attention was given to practical activities. Ivan Semian, a research fellow at the Experimental Archaeology Laboratory of the Institute of Archaeology and Ethnography of the NAS RA, demonstrated to the students the technologies of obsidian processing from the Stone Age. Participants not only observed the process but also tried their hand at retouching, flaking, and creating obsidian tools.

The knowledge acquired during the excavations was reinforced during excursions to the historical core of Gyumri and the Kumayri Historical and Cultural Museum-Reserve. During these visits, students were able to familiarize themselves with unique exhibits and learn about the preservation and exhibition of archaeological finds in museums.

The fifth day of the school was also spent actively working on the excavation of the eastern part of the monumental structure in the Jradzor fortress. Later, Ivan Semian introduced the participants to reconstructions of Bronze Age weapons, including a sling, spear, and axe. The students were given the opportunity not only to explore these artifacts but also to try their hand at using a sling.

In addition, the students attended a lecture by Ph.D. B. Vardanyan on the Bronze Age of Armenia. After the lecture, Ivan Semian conducted a master class on playing the aulos, a double-reed wind instrument widely used in the Near East.

In the final days of the summer school, the students continued their work on the excavations and also participated in a demonstration of Bronze Age casting technology. Under the guidance of Ivan Semian, the students produced a Bronze Age arrow, similar to one found in the Lchashen burial site.

At the end of the summer school, students from Vanadzor State University and Samtskhe-Javakheti University of Georgia received certificates of participation. Their work culminated in reports on the excavations, which, the organizers hope, will influence the future professional choices of these young archaeologists.

Op/day 1-2




Op/day 3-4





Op/day 5







Op/day 6-7







